ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 64-րդ, 135-րդ հոդվածներով և 146-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման մասին հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է հետևյալ կարգով.

1) մինչև քսանական րոպե տևողությամբ ելույթներով հաջորդաբար հանդես են գալիս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում Կառավարության, «Իմ քայլը», «Բարգավաճ Հայաստան», «Լուսավոր Հայաստան» խմբակցությունների և Բարձրագույն դատական խորհրդի առաջադրած թեկնածուները.

2) ելույթից հետո թեկնածուին կարող են հարցեր տրվել.

3) մտքերի փոխանակություն.

4) մինչև տասական րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթներով նույն հաջորդականությամբ հանդես են գալիս թեկնածուները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2019 թվական, նոյեմբերի 12
Երևան

ԱԺՈ - 174 - Լ